



Նախագահ
Ռասսել Մ. Նելսոն

# Մորմոնի Գրքում զորություն կա

Երբ ես մտածում եմ Մորմոնի Գրքի մասին, միտքս է գալիս *զորություն* բառը: Մորմոնի Գրքի ճշմարտությունները *զորություն* ունեն բժշկելու, սփոփելու, վերականգնելու, սատար կանգնելու, զորացնելու, մխիթարելու և քաջալերելու մեր հոգիները:

Մորմոնի Գիրքը . . .

- Եվս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին: Շատ մարգարեներ, որոնք գրել են այն, տեսել են Հիսուս Քրիստոսին: Մորմոնի Գիրքը ներառում է նրանց վկայությունները Նրա մասին:
- Հիշատակարան Նրա ծառայության մասին այն ժողովրդին, որը հին ժամանակներում ապրել է Ամերիկայում:
- Ճիշտ է:

Մենք հրավիրում ենք ձեզ կարդալ Մորմոնի Գիրքը: Կարդալու ընթացքում խորհուրդ կտամ նշել յուրաքանչյուր հատված, որը Փրկչի մասին է: Այդպես անելով՝ դուք ավելի կմոտենաք Նրան: Եվ փոփոխություններ, նույնիսկ հրաշքներ կսկսեն տեղի ունենալ: ●

*Հատված՝ «Մորմոնի Գիրքը. Ինչպիսի՞ն կլիներ ձեր կյանքն առանց նրա» ելույթից,* Լիահոնա, *նոյ. 2017, 60-63, և «Քույրերի մասնակցությունը Իսրայելի հավաքման գործում»,* Լիահոնա, *նոյ. 2018, 68-70:*



## Ինչպես գտնել Հիսուսին Մորմոնի Գրքում

**Նախագահ Նելսոնը մեզ հրավիրել է փնտրել Հիսուս Քրիստոսի անունը, երբ կարդում ենք Մորմոնի Գիրքը: Հիսուսը շատ անուններ ունի սուրբ գրություններում: Ահա մի քանիսը, որոնք կարող եք փնտրել:**




ՁԱԽ ԿՈՂՄՈՒՄ՝ ՄԵԿ ԱՌ ՄԵԿ, ԸՍՏ՝ ՎՈԼԹԵՐ ՌԵՅՆ, ԱՋ ԿՈՂՄԻ ՆԿԱՐԸ՝ ԷՅՓՐԻԼ ՍԹՈՏԻ